ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 8(58), 30 հոկտեմբեր, 2023թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին այցելել ԵՄ «Իրավապահ համակարգի և անվտանգության աջակցման բարեփոխումներ» ծրագրի աջակից Թոմաս Բիքմանասը, միջազգային փորձագետ Արթուրաս Քեմեզիսը և ազգային փորձագետ Արևիկ Սիմոնյանը:

Հյուրերին դիմավորեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավար կազմը՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանի գլխավորությամբ:

Մ. Մուրադյանը, ողջունելով հյուրերին, հատկապես կարևորեց համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա կրթական հաստատությունների հետ: Նա նաև նշեց, որ լայնածավալ բարեփոխումներ են ընթանում ՆԳՆ-ում, որի շրջանակներում ժամանակահունչ ուսումնական ծրագրեր իրագործելու ջանքեր են գործադրվում: Շեշտադրվեց նաև քրեական ոստիկանության ստեղծմանն ուղղված ուսումնական ծրագրերի ներդնումը՝ կարևորելով ծառայողների հոգեբանական և հասարակության հետ հաղորդակցման պատրաստվածությունը:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար և շեշտադրեցին այն ուղղվածությունները, որի շրջանակներում իրականացնելու են բարեփոխման ծրագրերը՝ ՆԳՆ, ոստիկանություն, միգրացիոն ծառայություն և սահմանային անվտանգություն:

Հանդիպման ավարտին հյուրերը ծանոթացան նաև Կրթահամալիրի առանձնահատկություններին, կառուցվածքին և գործառույթներին:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ պատվիրակությունը 2023 թվականի սեպտեմբերի 18-ին մեկնել էր Չեխիայի Հանրապետություն՝ 18-22-ը մասնակցելու BRS ծրագրի շրջանակներում «Երեխային հատուկ հարցաքննության սենյակում հարցաքննելու և հանցագործության զոհի հետ աշխատելու» թեմայով վերապատրաստման դասընթացին:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը ներկայացնում էին Ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Հ. Խաչատրյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Ա.Կիրակոսյանը:

Ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Չեխիայի Հանրապետության քրեական ոստիկանության և հետաքննությունների բյուրոյի (այսուհետ՝ USKPV) հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ, գնդապետ Միրոսլավ Ադամչիկի, USKPV-ի տեղակալ, գնդապետ Ռադեկ Սմեյդայի, Պրահայի ոստիկանության գլխավոր շտաբի պետի տեղակալ, գնդապետ Վոյտեխ Մոտիկայի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր ծառայության առանձնահատկությունները, գործունեության արդյունավետության բարձրացման հնարավորություններն ու միջոցները:

Ճանաչողական այցեր կատարվեցին նաև Չեխիայի ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ և ծանոթացան տեղի ոստիկանության կառուցվածքին, առանձնահատկություններին, հարցաքննության մոդելներին, հանցագործությունների քննության ձևերին, անչափահասների և ընտանեկան բռնությունից տուժած անձանց հարցաքննության առանձնահատկություններին:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Առայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, օրինականության ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի ապահովման և մարտական պատրաստականության գործում բարձր ցուցանիշներ ապահովելու համար, ինչպես նաև ի նշանավորումն Անկախության տոնի 32-տարեդարձի՝ ՀՀ ՆԳՆ նախարարի և ՆԳՆ նախարարի տեղակալ, ոստիկանության պետի հրամաններով պարգևատրվել են Կրթահամալիրի մի շարք ծառայողներ:

Խրախուսանքի արժանացած ներքոնշյալ ծառայողներին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանն անձամբ հանձնեց մեդալներն ու կրծքանշանները՝ մաղթելով մասնագիտական վերելքներ ու հայրենիքին ծառայելու անսպառ եռանդ:

Խրախուսանքի արժանացած ծառայողները.

1. «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով՝ Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Միսակ Մարկոսյանը,

2. «Ոստիկանության 100-ամյակ» հոբելյանական մեդալով՝ Կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արտակ Հովհաննիսյանը,

3. «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով՝ Կրթահամալիրի քոլեջի ոստիկանության տակտիկական և տեխնիկական պատրաստականության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Վահագն Ֆրանկյանը,

4. «Ոստիկանության գերազանց ծառայության համար» կրծքանշանով՝ Կրթահամալիրի ՈւՄՎ միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Արմեն Անտոնյանը:

Մ. Մուրադյանը շնորհավորեց նաև Կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի պետ Հրաչիկ Մարգարյանին՝ «ոստիկանության գնդապետ» կոչմանն արժանանալու համար:

«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ՃԻՇՏ ՈՒ ՆՐԲԱՆԿԱՏ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՊԱՐԵԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Հասարակության խոցելի խմբերի հետ շփումը պահանջում է հսկայածավալ հոգեբանական, իրավական պատրաստվածություն: Թիրախային խմբերում են նաև անչափահասները, ում հետ զրուցելիս պետք է առաջնորդվել «հավասար-հավասար» շփման սկզբունքով՝ հաշվի առնելով նաև տարիքային առանձնահատկությունները, վարքային դրսևորման մոդելները»: Սա երեխաների և ընտանիքների հետ աշխատելու համար պարեկային ծառայողների կարողությունների ընդլայնմանն ուղղված դասընթացից մի հատված էր, որը վարում էր Մանկական զարգացման հիմնադրամի հատուկ հոգեբան Հասմիկ Մնացականյանը:

Դասընթացը կազմակերպվել է ՄԱԿ Փախստականների հարցերով զբաղվող (ՄԱԿ ՓԳՀ), ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակների, Մանկական զարգացման հիմնադրամի (CFD) նախաձեռնությամբ՝ համագործակցելով ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի հետ:

Դասընթացը մեկնարկեց հոկտեմբերի 11-ին: Առաջին խմբի ունկնդիրները Սյունիքի մարզում ծառայություն իրականացնող պարեկներն էին:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանը, անհրաժեշտ նախաձեռնություն իրականացնելու համար շնորհակալություն հայտնելով դասընթացի կազմակերպիչներին, ընդգծեց, որ առավել խոցելի անձանց հետ հաղորդակցվելիս կարևոր է ցուցաբերել ոչ միայն իրավական, այլև հոգեբանական աջակցություն: Նա նաև իր երախտիքը հայտնեց պարեկային ծառայողներին՝ այս բարդ ժամանակներում իրենց կատարած աշխատանքի համար:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Արդարադատության մատչելիության ծրագրի պատասխանատու Վիկտորյա Օհանյանն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին և կազմակերպիչներին՝ կարևորելով նմանատիպ նախաձեռնության անհրաժեշտությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտպան Նաիրա Մարությանն էլ իր խոսքում ընդգծեց արցախահայ ընտանիքների հետ ճիշտ և նրբանկատորեն հաղորդակցվելու կարևորությունը, մասնավորապես՝ ոստիկանության ծառայողի համար:

Դասընթացի ժամանակ քննարկվեց ոստիկանների և արցախահայության հաղորդակցման առանձնահատկությունները, կարեկցանք ցուցաբերելու գրագետ ու նուրբ մոտեցումները՝ հիմնված տարիքային, վարքային դրսևորումների առանձնահատկությունների վրա:

Դասընթացավարներից հատուկ հոգեբան Հասմիկ Մնացականյանն անչափահասների դեպքում կարևորեց նաև աշխատանքը ծնողների հետ: Նա նաև նշեց, որ իրավական ու հոգեբանական օժանդակության տրամադրումը պետք է իրականացնել առանց խախտելու անձնային սահմանները և կարողանալ կառավարել հուզական աշխարհը:

Հարցին, թե ինչպես կարելի է հաղթահարել անզորության զգացումը, հոգեբանը պատասխանեց, որ յուրաքանչյուր մարդ պետք է սկսի ինքնաճանաչողությունից: Հոգեբանը նաև պրակտիկ խորհուրդ տվեց օրվա ընթացքում գրի առնել վերապրած բոլոր հույզերը՝ դրանց մեջ չթաթախվելու ու բացասական զգացողությունները թիրախային խմբերին չփոխանցելու համար:

Դասընթացը շարունակական է:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԱՎ ԵՎՍ ՄԵԿՈՎ

Օգոստոսի 12-ին Հայ-ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի 063 մասնագիտական խորհրդում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ալիսա Մանվելի Սմբատյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ:

Կրթահամալիրի ողջ անձնակազմն ի սրտե շնորհավորում է նորընծա գիտնականին՝ մաղթելով մեծ հաջողություններ:

ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ ՀՈՖ-ՈՒՄ

Այս թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողների՝ «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» առարկայի գործնական պարապմունքը ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Սահակյանն անցկացրեց Հայաստանի Հանրապետության Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) երեխաների աջակցության կենտրոնում՝ նպատակ ունենալով ամրապնդել սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները:

Գործնական պարապմունքի ժամանակ սովորողներին ներկայացվեցին այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում անչափահասների հայտնվելուն: Դրանք առավելապես ընտանիք չունեցող, անապաստան մնացած, լքված, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են, որոնք ձեռք են բերել նաև վարքագծի շեղումներ: Սովորողների ուշադրությունը հրավիրվեց կենտրոնում երեխաներին տրամադրվող տարբեր ծառայությունների մատուցման ձևերին՝ ոստիկանության իրավական ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա և այլն:

Սովորողները տեղում համոզվեցին ոստիկանության աշխատակցի՝ տվյալ գործընթացում ունեցած առանցքային դերակատարման մեջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Հայ երգահան, երաժշտագետ, ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնադիր Կոմիտաս Վարդապետը՝ նույն ինքը Սողոմոն Սողոմոնյանը, ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26-ին Անատոլիայի (Թուրքիա) Քյոթահիա քաղաքում: Հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, կոշկակար էր, սակայն երգեր էր հորինում և օժտված էր գեղեցիկ ձայնով: Մայրը՝ Թագուհին, գորգագործուհի էր, որը նույնպես ուներ երաժշտական ունակություններ:

Ծանր է եղել Կոմիտասի մանկությունը. մեկ տարեկանը դեռ չլրացած՝ կորցնում է մորը, իսկ տասնմեկ տարեկանում որբանում է՝ կորցնելով նաև հորը: Այս որբուկին ոչ ապարանք էին ժառանգություն թողել, ոչ գանձեր. համեստ ծնողներից ժառանգել էր լոկ ձայն կլկլան՝ մերթ այնպես մեղմիկ, ասես թե գինով լցնում են կուլան, մերթ այնպես զնգուն, ասես թե կիրճում հովն է շնկշնկում:

Թափառական փոքրիկ երգիչ էին անվանում խղճուկ հագուստով խոհեմ ու բարի տղային, ում տարիներ անց կոչելու էին Կոմիտաս Վարդապետ:

Ահա նախախնամությունը նրան ուղղորդում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածին՝ Գևորգյան Ճեմարան, և նա դառնում է ճեմարանի սան:

Ութսունմեկ թիվ. Վաղարշապատ՝ Էջմիածին: Ճեմարանի բակում հավաքվել էին տարբեր գավառներից ուսման եկած աղվամազ մանուկներ, և նրանց մեջ երկչոտ, գունատ ու մեկուսի կանգնել էր նա՝ հագին տարազ տաճկահայի, կարմիր շապիկ, կանաչ վարտիք, նախշուն գուլպա՝ վրան զոլեր, ու պոչավոր մաշված սոլեր: Բոլորն իրար հետ խոսում, շփվում էին, իսկ նա՝ մենակ, ոնց խառնվեր, ասերխոսեր. չէ՞ որ հայերեն լավ չգիտեր: Բայց ի՞նչ հույսով էր եկել. ո՞վ կընդունի, այն էլ... որտե՜ղ. մի հոգևոր ուսումնարան, որի սանը մի օր պիտի հագնի սքեմ վարդապետի:

Երբ նա սկսեց թուրքերեն երգել, Կաթողիկոսը մթագնեց, հանկարծահաս զայրույթից ծնած կրակը վառվեց ծեր աչքերի մեջ, նրա շուրթերին ժպիտը սառեց:

Առաջին անգամ Վեհարանի հին պատերի մեջ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝ «Հայր մեր», «Միայն սուրբ», ուր գրաբարն է հնչել դարեդար և շարականն է հուզել բոլորին,Հովվապետն ինքը լսում է ինչ-որ մի մանկան անօրեն երգ... Բայց իր զուլալ ու կարկաչուն ձայնով փոքրիկը գերեց Կաթողիկոսին: Կաթողիկոսը մի պահ մոռացավ, թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում, ովքե՞ր են շուրջը՝ իր Վեհարանում: Նա դանդաղ ժպտաց ու թաց աչքերով հազիվ բարբառեց.

-Որդյա՜կ իմ, ո՜րբ իմ...

Ու ձայնը մարեց...

Նա ընդունվում է: Սովորելու տարիներին մեծ հետաքրքրասիրությամբ ուսումնասիրում է ժողովրդական երգերը, ինչն էլ ավելի է խորացնում ուսուցչական տարիներին:

1894 թվականին ձեռնադրվում է աբեղա և ստանում Կոմիտաս անունը: 1895 թվականին Կոմիտասին շնորհվում է վարդապետի հոգևոր աստիճան:

Նրա գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ է բացում հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Կոմիտասը շրջում էր Հայաստանի տարբեր բնակավայրերով, գրի առնում հազարավոր ժողովրդական մեղեդիներ, այդ հարստությունը փրկելով ոչնչացումից՝ նա միաժամանակ զտում էր այն՝ բացահայտելով հայ երգի նուրբ, ազնվական էությունը: Կոմիտասը լրջորեն զբաղվում էր նաև հոգևոր երաժշտությամբ, աշխատում հայկական խազերի վերծանման վրա: Նրանով է սկզբնավորվել հայ երաժշտության պատմության նոր դարաշրջանը: Վազգեն առաջին կաթողիկոսն ասել է. «Հայ ժողովուրդը Կոմիտասյան երգի մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը»:

Հսկայական են նրա ծառայությունները հայ երաժշտության մեջ:

Կոմիտասն ուսանել է նաև Բեռլինում՝ ուսումնասիրելով կոմպոզիցիայի տեսություն, հոգեբանություն, փիլիսոփայություն, խմբավարություն, մշակել է ձայնը, սովորել դաշնամուր ու երգեհոն նվագել: Այդ տարիներին գրել է երգեր, ռոմանսներ, խմբերգեր, մշակել ժողովրդական երգեր: Շատ մտերիմ էր Ռիխարդ Շմիդտի (մասնավոր կոնսերվատորիայի տնօրեն) ընտանիքի հետ: Վերջինս Կոմիտասի մասին գրել է. « Կոմիտասն արդեն մեծ վարպետ է: Ես հպարտ եմ նրանով: Զգում եմ, որ ապրում եմ և ապրելու եմ Կոմիտասի մեջ»:

Կոմիտասը մեկնում է Փարիզ, ստեղծում երգչախումբ և հազարավոր մարդկանց գրավում իր ժողովրդական երգերով:

Բուռն գործունեություն է ծավալում տարբեր երկրներում մինչև Հայոց ցեղասպանությունը՝ 1915 թվականի ապրիլը: Օսմանյան կառավարությունը շատ այլ հայ մտավորականների հետ ձերբակալում է նաև Կոմիտասին և արտաքսում բանտարկյալների ճամբար: Սակայն անհայտ հանգամանքներում նրան շուտով ազատում են: Մինչև 1919 թվականը սկզբում տեղավորում են թուրքական ռազմական հոսպիտալում, իսկ հետո տեղափոխում Փարիզի հոգեբուժարաններ, որտեղ էլ տառապանքների մեջ անցկացնում է իր կյանքի վերջին տարիները:

Մեր ազգային երաժշտական մշակույթի հիմնադիր Կոմիտասի կյանքն ընդհատվում է 1935 թվականի հոկտեմբերի 22-ին: Նրա աճյունը տեղափոխում են Հայաստան և հողին հանձնում Երևանում՝ մշակույթի գործիչների պանթեոնում, որ հետո կոչվեց հենց նրա անունով:

Մենք միշտ բարձր պետք է պահենք ու չկորցնենք մեր ազգային արժեքները, չնմանվելով օտարներին՝ ամբողջ աշխարհին ներկայանանք մեր մշակույթով՝ հետևելով մեծ կոմպոզիտորի՝ Արամ Խաչատրյանի կոչին. «Կոմիտասը մեծ ժողովրդի մեծագույն կոմպոզիտորն է, մեր երաժշտության հոգևոր հայրը: Եվ ամեն մի հայ երաժիշտ պետք է խորն ուսումնասիրի Կոմիտասի երգը, որպեսզի չկտրվի մեր ժողովրդի երաժշտության ակունքներից»:

Լիանա Սահակյան
առաջատար մասնագետ

ՄԵՆՔԵՐԸ՝ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ, երբ կատարում եմ նրա երգերը, մտքումս հառնում է նրա դաժան ու մռայլ ճակատագիրը: Կոմիտասով տարվել եմ դեռ շատ երիտասարդ տարիներիս և մեծ սիրով կատարել բոլոր համերգներում: Հետաքրքիր ու հուզիչ էր երգում հայրս Կոմիտաս: Շատ ու ամենուր երգել եմ Կոմիտասի անմահ «Կռունկը»: Անսահմանորեն սիրում եմ «Կոմիտաս» և քանի դեռ երգում եմ, ես չեմ բաժանվի նրանից: Կոմիտաս... սիրելի, անկրկնելի, մեծ Կոմիտաս:

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆ

Ամեն անգամ, որ Կոմիտասի ձայնագրած ու դաշնակած ժողովրդական երգերը լսում եմ, կենդանանում է իմ աչքի առաջ նա իր ոգևորությամբ. ես զգում եմ և գիտեմ՝ նրա կատարած գործը վաղանցիկ չի լինի և երկա՜ր, շա՜տ երկար ժամանակ մեր բնիկ երաժշտական հնչյուններով սիրելի կդառնա շատ սերունդների:

ՄԱՆՈՒԿ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Անսահման հպարտությամբ և ուրախությամբ եմ գիտակցում, որ իմ հայրենիքն աշխարհին տվել է այնպիսի հրաշալի մի կոմպոզիտոր, ինչպիսին Կոմիտասն է: Ստեղծագործական մեծ հուզմունքով եմ աշխատում Կոմիտասի ստեղծագործությունների վրա, դրանք ինձ հսկայական բավականություն են պատճառում:

ԶԱՐՈՒՀԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ասում են՝ Կոմիտասը հայկական Բախ է, Շուբերտ: Այդ բոլորը լավ է, դրանց մեջ ճշմարտություն կա, բայց Կոմիտասը Կոմիտաս է, միայն ու միայն Կոմիտաս: Չէ՞ որ մեծ արվեստագետները մեկը մյուսին կրկնել չեն կարող: Իսկ իմ Կոմիտասն ահա այնպիսին է, ինչպիսին կա, արդեն տեսնում եք:

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

Ես զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլիներ սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից:

ՄԻԽԱՅԵԼ ԳՆԵՍԻՆ

Ես Կոմիտասին համարում եմ հայկական երաժշտության հավերժական խորհրդանիշ, իսկ նրա ստեղծագործությունը՝ մեծագույն օրինակ և աղբյուր, որից ներշնչանք կստանան հետագա հայ բոլոր կոմպոզիտորները: Ինձ հատկապես հոգեհարազատ է լակոնիկությունը, պարզությունը, պարկեշտությունը երաժշտության մեջ և երաժշտական միջոցների խնայումը:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

...Ճշմարտապես Կոմիտաս հասկանալու համար բացսիրտ ու լայնախոհ պիտի մոտենաս նրան, ուժով զսպես աչքերիդ մեջ ակամա կուտակվող արտասուքը, որ անմշուշ տեսնես, լսես ժողովրդիդ ու նրա զավակի՝ Կոմիտասի լուսավոր, հուզառատ հոգին:

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել՝ ըստ նրա հավաքական կերպարի, ու ժառանգել ամենայն հայրականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիր բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց, ինքը՝ ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև նրանք են ժողովուրդ վերածնում: Կոմիտասն այդպիսի ծնունդ էր, և նրա պարգևած լույսը դեռ երկար պիտի անդրադառնա պարգևողի դեմքին և արտացոլվի նրա հոգու մեջ:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Կոմիտա՜սը...

Եթե Հռիփսիմեի վանքը Հայաստանի, հայ ժողովրդի ոգու և էության քարակերտ պատկերն է, միջնադարյան մանրանկարչությունը՝ Հայաստանի գույնը, Սասնա Դավիթը՝ խոսքը, ապա նա՝ Կոմիտասը, Հայաստանի ձայնն է՝ զուսպ, խոր, առնական, բայց փխրուն, տաք, կարոտած, լի հառաչանքով, այլև օրհնությամբ, արցունքով, այլև ժպիտով, թախիծով, այլև լույսով, անհուն, անսահման լույսով: Կոմիտասով այդ ձայնը լսելի է դառնում աշխարհին:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Կոմիտասն աննյութեղեն ու հազարագույն մի էություն-տաճար է. նրա դռանը մոտենալու համարձակություն և իրավունք կարող են ունենալ նրանք, ովքեր ժողովրդի մեծ արվեստի նկատմամբ ունեն երկյուղածություն և սրբազան դող:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ

ՊԵՏՔ Է ՀԱՎԱՍԱՐՎԵԼ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ

Զրույց՝ մանկավարժության մասին

«Դու լավ ուսուցիչ չես լինի, եթե կենտրոնանաս միայն անելիքիդ վրա և ուշադրություն չդարձնես, թե ով ես դու»: Ռուդոլֆ Շտայներ այս խոսքերով շնորհավորում ենք բոլոր մանկավարժներին՝ ուսուցչի միջազգային օրվա կապակցությամբ:

Մանկավարժության էության, դերի, մեթոդների մասին զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հայարփի Քեշիշյանի հետ: Ոստիկանական բուհում ղեկավար պաշտոն զբաղեցնելուց բացի նա նաև երկար տարիներ դասավանդում է «Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ», «Օտար լեզու (անգլերեն)» առարկաները:

-Վարչարարություն և դասավանդում: Ինչպե՞ս եք կարողանում համատեղել:

-Առաջին հայացքից երկուսի համատեղումը կարող է մարտահրավերային ու բարդ թվալ, սակայն հավատացնում եմ, որ մեկը մյուսին չի խանգարում, ավելին՝ լրացնում է: Դասավանդման դաշտում սովորողներին և նրանց խնդիրներին մոտ լինելն օգնում է լուծումները գտնել վարչարարության դաշտում:

-«Եթե մանուկը չի հասկնար ձեր դաստիարակությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին. պետք է վար իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել»: Մանկավարժության վերաբերյալ Կոմիտասի այս հայտնի խոսքերը կիրառելի՞ են 21-րդ դարի ուսանողի համար:

-Կոմիտասյան այս խոսքերը դեռ դարեր շարունակ կմնան արդիական: Պետք է հավասարվել սովորողի հոգեկան աստիճանին, գնահատել նրա ուսման կարիքները, որպեսզի դասավանդման գործընթացի ոչ ճիշտ կազմակերպումը չհանգեցնի սովորողի հիասթափությանը և հուսալքմանը:

- Ինչպե՞ս եք միաձուլում խստությունն ու կարգապահությունը դասը վարելու ինտերակտիվ մեթոդի հետ:

-Խստությունն ու կարգապահությունը ինտերակտիվ (փոխներգործուն) ուսուցման մեթոդների հետ միաձուլելը ստեղծում է դինամիկ և արդյունավետ ուսումնական միջավայր: Այդ հավասարակշռությանը հասնելու համար կատարում եմ դասընթացի հստակ պլանավորում և հետևողական եմ լինում դրա իրականացմանը: Այն օգնում է ստեղծել մի միջավայր, որտեղ սովորողներն ակտիվորեն ներգրավված են, բայց նաև հաշվետու են իրենց ուսման և վարքագծի համար:

-Ինչու՞ է Հայոց լեզվի ուսումնասիրությունն անհրաժեշտ ոստիկանների գործնական աշխատանքում:

-Դասընթացի հիմնական նպատակը սովորողների իրավական լեզվամտածողության, ճիշտ և տրամաբանված մասնագիտական խոսք կառուցելու կարողությունների ձևավորումն է: Բացի տեսական նյութի ուսումնասիրումից, դասընթացը ներառում է բազմաթիվ գործնական պարապմունքներ: Սովորողներին ներկայացվում են վարչագործարարական տեքստերի (հիմնականում գործնական գրությունների՝ զեկուցագիր, դիմում, տեղեկանք և այլն) ճիշտ կառուցման առանձնահատկությունները: Հետաքրքիր են անցնում նաև լսարանային բանավեճերը, որոնք իրականացվում են խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման նպատակով:

- Նշեք ոստիկանական բուհում անգլերեն դասավանդելու երեք առանձնահատկություն:

- Առաջին առանձնահատկությունն այն է, որ դասավանդման հիմքում դրված է մասնագիտացված անգլերենը՝ իր բառապաշարով և տերմինաբանությամբ: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ դասապրոցեսում կիրառվում են դերային խաղեր և սիմուլյացիոն վարժություններ՝ լեզվական հմտությունները կոնկրետ համատեքստում զարգացնելու համար: Իսկ որպես երրորդ առանձնահատկություն՝ կարող եմ նշել փոխհամագործակցության համատեքստում տարբեր մշակութային ծագում ունեցող անհատների հետ ճիշտ և արդյունավետ հաղորդակցվելու հմտությունների կատարելագործումը:

- Մասնագիտական անգլերենի ո՞ր բառն են առավել դժվարությամբ մտաբերում սովորողները:

Ոչ միշտ, բայց երբեմն դժվար են մտաբերում «indictment» (թարգմանաբար՝ մեղադրական եզրակացություն) բառի ճիշտ արտասանությունը:

- Ի՞նչ մեթոդներով կարելի է դրդել անգամ ամենածույլ ուսանողին սովորել հետաքրքրությամբ:

-Այս հարցում օգնության են գալիս ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդը և խմբային աշխատանքները, երբ սովորողն ակամա մասնակից է դառնում դասապրոցեսին: Այսինքն՝ եթե սովորողն իր համար առաջնային հետաքրքրություն չի համարում դասընթացին ներգրավվելն ու աշխատելը, ապա խմբային աշխատանքի դեպքում ոչ թե սեփական, այլ խմբի շահերից է բխում իր մասնակցությունն ու ակտիվությունը: Սովորողներին նրբանկատորեն բացատրվում է նաև հայտնի խոսքերի իմաստը. «Ձեր կյանքը հիմա այն ամենի արդյունքն է, ինչն արել եք մեկ տարի առաջ: Ձեր կյանքը մեկ տարի անց կլինի այն ամենի արդյունքը, ինչ անում եք հիմա»:

-Մի պահ պատկերացնենք, որ ես Ձեր ուսանողն եմ և այսօրվա դասին պատրաստ չեմ: Ձեր խոսքը:

-Չնայած համոզված եմ, որ քո պարագայում նման բան լինել չի կարող (ժպտում է), այնուամենայնիվ, կասեմ հետևյալը. «Եթե առաջադրանքները կատարելու խնդիր ունես, վստահ կարող ես դիմել ինձ, որպեսզի օգնեմ քեզ: Ես այստեղ եմ հենց դրա համար»:

Զրուցեց ոստիկանության կապիտան Անի Ղուկասյանը

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

***

Խոսեք մարդու հետ իր մասին, և նա ձեզ կլսի ժամերով:

Բենջամին Դիզրաելի

***

Դիպլոմը թույլատրում է սխալվել ավելի վստահորեն:

Անտոն Լիգով

***

Հումորի զգացումը մարդկության ամենամեծ օրհնություններից մեկն է: Ոչինչ չի կարող դիմանալ ծիծաղի հարվածին:

Մարկ Տվեն

***

Կատարելությունն անհասանելի է: Սակայն եթե մենք ձգտենք կատարելության, մենք կհասնենք անհավանական արդյունքների:

Վինս Լոմբարդի

***

Բավական է միայն մարդ դառնա նշանավոր, իսկույն գտնվում է դպրոցում նրա կողքին նստած ինչ-որ մեկը:

Քին Հաբարդ

***

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Դիստերվեգ

***

Եթե չես ուզում նստեն վզիդ, ցածր մի խոնարհվիր:

***

Ավելի լավ է կորցնել հպարտությունը հանուն թանկ մարդու, քան թանկ մարդուն՝ հանուն հպարտության:

***

Ցանկացած ազգին տիրելու համար անհրաժեշտ են փոքրաթիվ դավաճաններ և բազմաթիվ հիմարներ:

Ուինսթոն Չերչիլ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Հին հռոմեական անեծք. «Թող քո բոլոր ատամները թափվեն, մնա միայն մեկը...»: Ինչի՞ համար:

2. Հոգեբանները խորհուրդ են տալիս. «Երբեք մի վիճիր հիմարի հետ: Մարդիկ կարող են ...»: Ի՞նչ կարող են անել մարդիկ:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Գրիպ:
2.Դատավորից:

Ստեղծագործում են մերոնք

ԻՆՔՆԱՄՈՌԱՑ

Թե օվկիանոսները
ելնեն ափերից,
Ու խավարներում
կյանքը մահանա,
Մեկ է, սիրելի՛ս,
կհիշեմ ես քեզ,
Թեկուզև կյանքս
այդպես վերջանա:
Եթե աստղերը
հուշեն երկնքից՝
Ինձ համար պահված է փշոտ մի ճամփա,
Մեկ է, պաշտելի՛ս, կփնտրեմ ես քեզ
Արահետներում՝ դաժան, անխնա:
Ու թե դու դառնաս հեռու և անտես,
Օտար ճամփեքում անդադար շրջես,
Ճամփաներ փնտրես, հավերժ դեգերես,
Ես խուլ ականջով ու կույր աչքերով
Գիշերներն ամբողջ միայն քեզ համար
Աղոթքներ կանեմ անվերջ, անդադար:
Կխնդրեմ Աստծուց՝ բարիքներ տա քեզ,
Որ վերադարձի ճամփեքով գերվես:
Ու ես կաղերսեմ՝ կյանքը ճանաչես,
Ճիշտն ու սխալը իրարից զատես.
Չտրվես օտար համոզմունքներիդ,
Նաև անքուն գիշերներ բերած
Քո հուզմունքներին:
Դու կյանքին նայես շիտակ աչքերով
Ու սիրես մեկին այնքա՜ն մեծ սիրով,
Որ ապրես անհոգ ու շատ երջանիկ,
Լինես ինձ հեռու, բայց այնքա՜ն մոտիկ:
Ու քո մեծ սիրով ու ապրումներով
Ինչքան էլ տարվես,
Մեկ է, սիրելի՛ս, կհիշեմ ես քեզ,
Մեկ է, սիրելի՛ս, կներեմ ես քեզ:

Գրետա Ալեքսանյան
Կրթահամալիրի շրջանավարտ

ՆՈՐԻՑ ԿՌԻՎ



Նորից կռիվ է, ու՞ր
ես, դյուցազու՛ն.
Արկի ձայները քեզ
չե՞ն խանգարում,
Ու՞ր ես, Գաբրիե՛լ,
ու՞ր ես, իմ եղբա՛յր,
Ելել են ոտքի պապ,
եղբայր ու հայր:
Ու՞ր ես, իմ ուժե՛ղ, իմ անպա՛րտ եղբայր,
Վտանգի տակ է հայրենիքը մայր,
Կռվի են ելել կանայք, աղջիկներ,
Կորցնում ենք կյանքեր,
թանկ հայրենիքներ:
Ու՞ր ես, իմ առյու՛ծ, ինչու՞ ես քնել,
Ազգին դու՛ ես պետք, ուզում է ապրել,
Բոլորն անցել են մարտական դիրքի,
Ոչ ոք չի կանգնել կողքին քո զենքի:
Զենքդ շարքերի արանքով նայում,
Հազարների մեջ նա քեզ է փնտրում,
Ու՞ր ես, դյուցազու՛ն, հասի՛ր օգնության,
Հաշվարկնե՛ր արա՝ հանուն փրկության:
Զարկի՛ր թշնամուն, թույլ մի՛ տուր շնչեն,
Նրանք քո ուժից իսպառ կկորչեն,
Ձնջի՛ր թշնամուն, վերացրու՛ կրկին,
Արի՛, տե՛ր կանգնիր քո հայրենիքին:

Մելսիդա Ավետիսյան
Իրավագիտության ֆակուլտետ,
3-րդ կուրս

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.10. 2023թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան